Տաթևացու Մեծոփից հեռանալու շարժառիթները մեզ յայտնի չեն։ Թովման թէ իւր Պատմութեան և թէ ՊԾԹ թուի յիշատակարանի մէջ յայտնում է, թէ աշակերտներն են ծածուկ փախցրել։ Բայց դժուար կարելի լինէր իրագործել այդ փախուստը «սիրելի» աշակերտների կողմից՝ առանց Տաթևացու համաձայնութեան։ Ամենայն հաւանականութեամբ գործին մասնակից էր և Առաքել եպիսկոպոսը. Տաթևից յետոյ եկած աշակերտները մի առ ժամանակ Մեծոփում մնալուց յետոյ՝ «գաղտագողի առեալ գնացին» Սաղմոսավանքի Յակոբ վարդապետի մօտ, որ իրենց ուսուցչի «հոգևոր հարազատն» էր, այսինքն աշակերտակիցը։ «Եւ մեք ելեալ գնացաք զկնի ն՞ր, հն՞դձ վարդապետաւք եւ եպ՞սաւք և գրոց աշակերտաւք և հասաք նմա յերկիրն Այրարատեան, լալով, ողբով, արտասուօք և ազիողորմն կսկծանօք», գրում է Թովման ՊԾԹ թուի յիշատակարանի մէջ. բայց համոզել և յետ դարձնել չ՛յաջողուեց։ Վարդապետների մէջ էին Յովհաննէս Մեծոփեցին, Մկրտիչ (Նահապետենց), Յակոբ Ովսաննայ, Մկրտիչ Բերկրցին և Թովման։ Տաթևից ընդ առաջ էր եկել և Առաքել եպիսկոպոսը։ Երևանում Տաթևացին վարդապետական աստիճան է տալիս Թովմային. այս մասին թէև Թովման յայտնում է վերոյիշեալ յիշատակարանի մէջ, բայց առանց տեղի անունը տալու։ Այդ պակասը լրացնում է Կիրակոս բանասէրը*։ Դէպքի ճիշդ ժամանակը յայտնի չէ. միայն պէտք է ՊԾԹ թուի աշնան վերջերին լինի. որովհետև Տաթևացին Մեծոփեցիներից բաժանուելուց յետոյ՝ միայն 36 օր ապրեց, ութ օր Տաթև հասնելուց յետոյ. նորա մահը հանդիպեց «յաւուր տօնի Նախավկային Ստեփաննոսի մեծի առաքելոյ»։ Թովմայի խօսքերից (Պատմ. եր. 60), թէ՝ «անտի (Արարատեան երկրից) ելեալ գնացաք ի շնորհալից աթոռն իւր սուրբ առաքելոյն Ստեփէոսի» կարելի է եզրակացնել, թէ Թովման էլ Տաթև է գնացել իւր վարժապետի հետ։ Բայց այդ կլինէր հակառակ յիշատակարանին, որի մէջ Թովման պարզ և մեկին կերպով գրում է, թէ լսել են նորա մահուան բօթը հեռուից, «զի յետ բաժանելոյն մեր ի նման է Լ.Զ օր միայն եկաց ի ժ՞ամի»։ Եւ յիրաւի, ձեռագիրների համեմատութիւնը ցոյց տուաւ, թէ պէտք է «գնաց» լինէր «գնացաք»-ի փոխարէն և խօսքը միայն Տաթևացուն է վերաբերում**։ Նոյն թուին զատկի տօնին Հաւուց Թառում վախճանուեց և Յովհաննէս Մեծոփեցին, ուր ուխտ էր գնացել «աստուածամուխ գեղարդեանն» և «պատկերի Ամենափրկչին», և Թովմայի ու վերոյիշեալ վարդապետների կողմից, որոնք նորա աշակերտներն էին, թաղուեց այնտեղ***։

---

* Նոր Նիւթեր. 744. (7)։ ** Հայմ. Ձեռ. № 1687/1899, 398բ. № 1705/1768, 340ա. № 1706/1769, 385բ.

*** Պատմ. Լանկ. 60. 61. 53. Նոր Նիւթեր. Ա.բ. 754. (17).